ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԿԱՊՈՒՏԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի

ՏՆՕՐԵՆ՝ _____ Է.ԱՎԱԳՅԱՆ

Կոտայքի մարզի <<Կապուտանի միջն. դպրոց>> ՊՈԱԿ-ի

2023-2024 ուսումնական տարվա 6-րդ դասարանի ղեկավարի

Աշխատանքային տարեկան ծրագիր

Դասղեկ՝ Նունե Մխիթարյան

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)** *Դասարանը բաղկացած է 13 հոգուց՝9 տղա, 4 աղջիկ: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են: Հարկ եղած պահին օգնում են միմյանց: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ: Բնականաբար, լինում են թեթև վեճեր, բայց շատ շուտ հարթվում:*

2. **Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում** *Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին , որպեսզի շտկել այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :*

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 **Հոգևոր դաստիարակություն** *Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ:*

3.2 Գեղագիտական դաստիարակություն *Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:*

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն *Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ : Նշել մի շարք ֆիդայիների անուններ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստ ձևերը:*

3.4 Ֆիզիկական դաստիարակություն *Դասապրոցեսին պետք է ցուցաբերող ակտիվություն : Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով:*

3.5 Աշխատանքային դաստիարակություն *Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը, որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:*

3.6 Բնապահպանական դաստիարակություն *Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է:*

4. Դպրոց-ընտանիք կապը *Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց ընտանիք կապը, որպեսի աշակերտները ավելի լավ սովորեն:*

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	կատարման ժամկետը	Կատարողներ
1	Դասարանական աշակերտական խորհրդի ընտրություն:	11.09	աշակերտ դասղեկ
2	Ազնիվ ու անկեղծ հարաբերությունները մեր դասարանում :	18.09	աշակերտ դասղեկ
3	Դպրոց հաճախելու կանոններ, համաճարակային իրավիճակից ելնելով՝ սովորողների իրավունքներն ու պարտականությունները:	25.09	աշակերտ դասղեկ
4	Ընկերասիրություն. Ո՞վ է իսկական ընկերը:	05.10	աշակերտ դասղեկ
5	Հետաքրքիր է անհասկանալի հարցերի պատասխանները գտնելը. զրույց	12.10	աշակերտ դասղեկ
6	Իմ կատարած լավ գործերը:	19.10	աշակերտ դասղեկ
7	Ծանոթություն աշակերտական պարտականություններին:	02.11	դասղեկ
8	ՈՒզում եմ օգնել ուրիշներին և ինքս էլ դիմեմ նրանց՝ օգնության համար:	09.11	աշակերտ դասղեկ
9	Քաղաքավարություն ամեն օր/սովորում ենք քաղաքավարության կանոններ. Կազմում ենք դասարանի կարգապահական կանոնները:	16.11	աշակերտ դասղեկ
10	ՈՒնե՞մ արդյոք վնասակար սովորություններ:	23.11	աշակերտ դասղեկ
11	<< Բնական աղետներ >> ներկայացնել բնական աղետների առաջացման պատճառները և դրանց հետևանքները:	30.11	դասղեկ
12	Իմ նախասիրությունները:	07.12	աշակերտ դասղեկ
13	Իմ կատարած ոչ ճիշտ գործերը:	14.12	աշակերտ դասղեկ
14	Ի՞նչ է պատասխանատվության զգացումը:	21.12	աշակերտ դասղեկ
15	Ամանորյա հրաշք:	11.01	աշակերտ դասղեկ
16	Էթիկա և էսթետիկա. լինենք ավելի	18.01	աշակերտ

	բարեկիրթ:		դասղեկ
17	Ի՞նչ եմ ուզում դառնալ:	25.01	դասղեկ
18	Հզոր ու հպարտ հայոց բանակ:	01.02	աշակերտ դասղեկ
19	Գիտելիքը ուժ է:	08.02	աշակերտ դասղեկ
20	<<Տյառնընդառաջ>> զրույց	15.02	աշակերտ դասղեկ
21	Իմ կարողություններն ու ձեռքբերումները:	22.02	աշակերտ դասղեկ
22	Իմ երկիրը երեկ, այսօր, վաղը:	29.02	աշակերտ դասղեկ
23	Մարտի 8: Կանանց միջազգային օր: Զրույց	07.03	աշակերտ դասղեկ
24	Նկարում ենք միասին	14.03	աշակերտ դասղեկ
25	Ճանապարհային երթևեկության կանոններ	21.03	աշակերտ դասղեկ
26	Բարեխղճություն, մարդասիրություն	04.04	աշակերտ դասղեկ
27	Կատակում ենք միասին . Ծիծաղի օր.	11.04	աշակերտ դասղեկ
28	Ինցպես հոգ տանել բույսերի և կենդանիների մասին	18.04	աշակերտ դասղեկ
29	Հայոց մեծ եղեռնի հիշատակի օր	25.04	աշակերտ դասղեկ
30	<< Ես հոգատար եմ բնության հանդեպ>>	02.05	աշակերտ դասղեկ
31	Իմ սուրբ հայրենիք	16.05	աշակերտ դասղեկ
32	Բացահայտում ենք մեր հայրենիքը. Էքսկուրսիա.	23.05	աշակերտ դասղեկ